ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 495-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«____» _____ 2025 թվականի N _____ -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ

ԱՊՐԻԼԻ 23-Ի N 495-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետություն օդային ճանապարհով իրականացվող ուղևորափոխադրումների զարգացմանն ուղղված աջակցության ծրագիրը, ֆինանսական օժանդակություն ստանալու կարգը և աջակցության ծրագրի շահառու ավիաընկերություններին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 495-Լ որոշման Հավելված 1-ում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

ա. 4-րդ կետում «սահմանաչափերով» բառից հետո լրացնել «և սկզբունքով» բառերով.

բ. 4-րդ կետի 2-րդ ենթակետում «ուևորի համար» բառերից հետո լրացնել «, որը Հայաստանի Հանրապետության սահմանը հատելուց հետո առնվազն 1 (մեկ) գիշերակաց անցկացրել է Հայաստանի Հանրապետությունում» բառերով.

գ. 6-րդ կետի 4-րդ ենթակետում «(այսուհետ՝ ծառայություն)» բառերից հետո լրացնել «և «Արմենիա» Միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ (այսուհետ՝ օդանավակայանի կառավարիչ)» բառերով.

դ. 6-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ

բովանդակությամբ.

«5) ծառայությունը 6-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված կարգով ստացված տեղեկատվությունը ուսումնասիրում է և 15 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է լիազոր մարմնին ցանկում ներկայացված այն ուղևորների տվյալները, որոնք մուտք են գործել Հայաստանի Հանրապետություն, ընդ որում՝ նոր ուղղություններից «Զվարթնոց» օդանավակայանով Հայաստանի Հանրապետություն մուտք գործած օդային ուղևորների վերաբերյալ տրամադրում է լիազոր մարմնին միայն այն օդային ուղևորների մասին տեղեկատվությունը, որոնք առնվազն 1 (մեկ) գիշերակաց անցկացրել են Հայաստանի Հանրապետության տարածքում հետևյալ օրինակով.

եթե օդային ուղևորը նոր ուղղությունից 2025 թվականի օգոստոսի 1-ին (անկախ ժամից) «Զվարթնոց» օդանավակայանում հատել է սահմանը և մուտք է գործել Հայաստան Հանարապետություն և առնվազն 2025 թվականի օգոստոսի 1-ի 23:59 դրությամբ ելք չի գործել Հայաստանի Հանրապետության սահմանով, ապա այսպիսի ուղևորի համար ավիաընկերությունը ստանում է սույն կարգի պահանջներին համապատասխան ֆինանսական օժանդակություն.».

ե. 6-րդ կետի 5-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1 ենթակետով.

«5.1) օդայավակայանի կառավարիչը 6-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված կարգով ստացված տեղեկատվությունը ուսումնասիրում է և 15 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է լիազոր մարմնին օդային ուղևորների տվյալ նոր ուղղությունից նշված օրը և նշված չվերթի համարով ժամանելու մասին կամ ներկայացնում է հիմնավոր առարկություն.».

զ. 6-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) լիազոր մարմինը 6-րդ կետի 5-րդ և 5.1-րդ ենթակետերով նախատեսված կարգով մաբողջական տեղեկատվությունը ծառայությունից և օդանավակայանի կառավարչից ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է ավիաընկերությանը այն ուղևորների ցանկը, որոնց համար սույն որոշման բոլոր պահանջներին համապատասխանելու դեպքում կտրամադրվի ֆինանսական օժանդակություն.»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հայաստանի Հանրապետության

վարչապետ **Ն. Փաշինյան**

ք. Երևան